

բացատրել այս մութ կէտերն, առայժմ մեր թարգմանութիւնը կը շարունակուի:

Ներքին Սրբազան Պ. Մանուկ:

Պատրիարքարան Հայոց, Կ. Պոլիս
20/2 ապրիլ 1879

(Գրառում)

«Նախնիքաց օրն զԶեղ տեսնել չկրնարուս պատճառաւ կը փութամ այս մի քանի տողեր գրել Զեր վերստին թեան առիթայտնել իմ խորին երախտագիտութիւնս այն համակրութեան համար՝ զոր բարեհաճած էք զայց ապա Հայ հասարակութեան այս քանի մ'ամսոյ միջոցին, յորս Ն. Բրիտանական վեհափառութիւնը ներկայացնելու կոչուած էիք:»

Պ. Մանուկ Ներքին Սրբազան

Թարապիւս, 3 մայիս 1879

«Սրբազան տէր,

«Ամսոյ 2 թուականաւ Զեր Սրբապետութեան նամակն ընդունելու պատիւ ունեցայ, և կը փախարիմ չնորհակալութիւն յայտնել ձեզ այն եղանակին համար՝ որով բարեհաճեցաք դիտարկել այն ջանքերը զորս իմ արարքս եղած էր ընել ի նպատակ Հայոց, և պարտաւորեալ Զեր Սրբապետութիւնը թէ այնպիսի դործ մը կատարած միջոցն, որ ստուգիւ խիստ հաճելի եղած էր ինձ անձնապէս, ևս ձերիչ բան չէմ ըրած, այլ կըրցածիս չափ ճշդիւ դործագրել Անդղիական կառավարութեան հրահանգներն, որ Բրիտանացի և իսլամ ժողովրդոց միջակին բարեօրոշմն Օսմանեան տէրութեան փրկութեան խարխիւր կը նկատէ:»

(Ստորգր.) ԷՏՈՒԱՐՏ Պ. ՄԱՆԱՒԱԿ

(Ինչպէս կը յիշեն ընթերցողք, Պ. Մանուկ, որ իրաւամբ խիստ քաղցր յիշատակներ թողած է մեր ազգայնոց մէջ, այժմ Եգիպտոսի Անդղիական ընդհանուր հիւպատոս և քաղաքական դործակատար է:)

Թիւ 44

Սե 0. Հ. Լեւոն Սահակեան

«Թարապիւս 11 յունիս 1879

«Մայ Լորտ.

«Պատիւ ունիմ ներփակեալ Զեր վսեմութեան հաղորդել նամակի մը պատճէնը, զոր Հայոց Պատրիարք Ներսէս Սրբազան, որ բախայն «Հրաժարեալ Պատրիարք» կանուանէ ինքզինք, զրկած է ինձ՝ Փոքր-Ստիւս և Բիւրդաստան բնակող իւր հասարակութեան վիճակին նկատմամբ: Այդ նամակն ինձ յանձնեց խորհրդարանային Արքեպիսկոպոս Պէշիքթաշի, որ խիստ երկայն կերպիւ խօսեցաւ Հայոց գանդատանայ վրայ, և պնդեց թէ հարկ է չուտով ինքնօրէն Հայ գաւառ մը կազմել՝ Հայ ընդհանուր կառավարչի մը ներքեւ, և Եւրոպական յանձնախմբին կողմնէ Արեւելեան Բումբէլի համար շինուածին նման կազմական կանոնադրով մը:

«Ես գիր ընդունելութեան զըրկեցի Ներսէս Սրբազանի նամակին, և ի պատասխանի իմացուցի իրեն թէ այդ նամակին մէկ պատճէնը Զեր վսեմութեան պիտի զրկեմ, և թէ իմ կողմէս բնաւ ջանք զանց չէի ըներ յընէն այն պարտականութեանց դործագրութիւնը ձեռք բերելու, զորս ստանձնած է ինք վեհ. թագուհւոյն կառավարութեան և Պէշիքթաշի գաղափարն ստորագրող Եւրոպական տէրութեանց առջև վստի պաշտպանութեան և բարեօր վարչութեան Հայոց, ինչպէս նաեւ Սուլթանին միւս հպատակաց որ յԱսիական թուրքիա:

(Ստորագր.) Օ. Հ. ԼԵՅԱՐՏ

Հայոց Պատրիարքին նամակը, զոր Սըր Հ. Լեւոնա կը յիշէ այս գրութեան մէջ, կարեւոր պաշտօնագիր մ'է, զոր ժամանակին թանկ և ճշգրտ գովեստներով հրատարակեցին, և մեք ալ այդ յորդրերէն առնելով գլխաւոր մասերն ասկէ առաջ թարգմանեցինք: Այդ նամակն, որ 1879 մայիս 19/31 թուականը կը կրէ և միւս գետնանայ ալ զրկուած է, Պէշիքթաշի գաղափարն Յարգ. յորդուածին դործագրութեան ձեռնարկուելուն և դաւառները Բումբէլի զրկուելուն առթիւ՝ երկրին մէջ տիրող զեղծումները կը բացատրէ և անոնց դարմանները կը ցուցնէ՝ ապակեգրոնացման դրութիւնը ջատագովելով: Անդղիական դեռպանին բաժնին պէս, Հայոց Պատրիարքը միայն «Փոքր-Ստիւս» և «Բիւրդաստան» բնակող իւր հասարակութեան վիճակին վրայ չխօսիր, այլ գլխաւորապէս Հայաստանի բնամար դարմաններ կառավարէ: Բայց ինչպէս որ Անդղիոյ մէջ ազատականք կը գանգատին թէ Անդղիական կառավարութիւնը թուրքերն իսլամաց հետ կը շփոթէ, Հայք ալ իրաւունք ունին դանդաղեցնել Անդղիական պաշտօնատարք Հայաստանը Բիւրդաստանի հետ կը շփոթեն:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնդոն 5 դեկտ.

Լրագիրը կը հաւատան թէ ոչ միայն Իրլանտայի, այլ և Անգլիոյ մէկ մեծ մասին մէջ գիւղացւոց և գործաւորաց մէջ չքաւորութիւն կը տիրէ:

Կը կարծուի թէ Ամերիկացի Ֆէնիաններ եկած են Իրլանտայի շարժումը կազմակերպելու համար: Զրոյց կայ նաեւ թէ գէնը ալ ներածուած է դադունաբար և նոր ձերբակալութիւնը կ'ստատուին:

Իրլանտայի Լորտ-Տեղակալն յայտնեց թէ կատարելապէս անօգուտ է օգնական զօրք զրկել յիրանաւ, և միայն կառավարիչ Սպիգո գաւառին մէջ տնտիկանութիւնն աւելցնել:

Պէշիքթաշի 5 դեկտ.

Կարծիք կայ միւս թէ Պ. Վալույէֆ Կորչաքոֆ իշխանին յաջորդ նշանակուած է: Ռուսիոյ կայսրը վերջին օրերս յիշեր է թէ Պ. Վալույէֆ Մոսկիւն րուն ազատագրութեան դործին մէջ օժանդակած է իրեն, և թէ ուրիշ բարենորոգումներ ընելու համար ալ կրնայ տակաւին վստահիլ անոր վրայ:

Փարիզ 4 դեկտ.

Բարաքսական ներքին կառավարան պատճառաւ Պորտան վարանաւոր է:

Լոնդոն 4 դեկտ.

Օսմ. Բոսն.	40 5/8
Փոլ.	1865 43 1/2
»	1869 43 3/4
»	1871 57 3/4
»	1872 49 1/2
»	1873 41 1/2
» Եգիպտ.	77 5/8
Անգլ. Բոսն.	97 5/8

Փարիզ 4 դեկտ.

Օսմ. Բոսն.	40.65
Գաղղ. »	50/0 115.70

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ռուսիոյ կայսրը գէտ եղած դաւաճանութեան փորձին ի գերեւ ելնելուն առթիւ վեհ. Սուլթանը լընդակցութեան հեռագիր զրկեց առ Ն. վեհափառութիւնն:

Երէկ զրոյց ելաւ թէ արտաքին դործոց նախորդ նախարար Գարաթէոսոսի փաշան Կիւրիտի կուսակալ պիտի անուանի, իսկ Կիւրիտի արդի

կուսակալ Ֆոթիոսիս փաշան՝ ելեւ մտից նախարար:

Վաղըթ կընէ թէ այս նկատմամբ տակաւին պաշտօնական լուր չկայ:

Յանձնախմբ. մը կազմուեցաւ որ տէրութեան ընդհանուր նահանգաց մէջ նոր ոստիկանութեան կազմութեանը պիտի հսկէ: Ֆէրիք Հաճի Հասան փաշան կը նախագահէ այս յանձնախմբին՝ որ եօթն անգամ կը պարունակէ, իբրեւ Եւրոպացի անգամ՝ վիլիամիս փաշա և Տէրկալաքի պէյ միայն կան: Այս խնդրոյն վրայ յետոյ պիտի խօսիմք կապոյտ տեղաւորին քաղաւածներուն շարունակութեան մէջ:

Երէկ առաւօտ Ռուսիոյ դեսպանատան մէջ դոճարանական ուղղութեւնը Զարին դէմ փորձուած դաւաճանութեան ի գերեւ ելնելուն առթիւ:

Զորքաբաւ թիւ Գաղղիացի երկրաչափներ Ղալաթիոյ ծովեզրին քարափ շինուելիք մասը չափել սկսան:

Յայտնի է թէ Արեւելեան Բումբէլի երմոսոցային մէջ մեծ բաց մը կայ: Փիլիպէէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՝ երեսփոխանական ժողովը մտադիր է եղեր կառավարական ծախքերը մեծապէս նուազեցնել, և ասոր համար՝ նահանգին մէջ աւելորդ պաշտօնները պիտի ջնջուին և թոշակաց գումարը պիտի նուազի եղեր:

Արեւելեան Բումբէլի սահմանագրելոց վրայ, իսլամ գաղթականաց խուռն բազմութիւն մը հաւաքուած է, և Լսիկ Զաղրայի կառավարչին հեռագրաւ փիլիպէ ծանուցած է թէ յիշեալ գաղթականք ցուրտէ և անօթութենէ կը մեռնին, և ինք պէտք եղած միջոցները չունի անոնց օգնելու:

Սերաստիոյ գաւառին մէջ ըրած չարագործութեամբ հռչակաւոր Միհր Ալին վերջապէս Կ. Պոլիս բերուեցաւ:

Տեսնեմք թէ Կ. Պոլսոյ մէջ ալ պիտի կրնայ գանել այն պաշտպանութիւնը կամ թոյլտուութիւնը զոր Սերաստիոյ իշխանութեանց կողմէ գտուի ի վնաս երկրին Հայ ժողովրդի դոյ:

Փիլիպէէն քաջուած հեռագրեր կը ծանուցանեն թէ՝ Պոլսոյ վերջին իշխանութեան կառավարութիւնն Արեւելեան Բումբէլի երեսփոխանաց քաղաքին նախագահ Պ. Կուէշօֆի և Սիլիմիյի կառավարիչ Պ. Լեքոնմօֆի հրաւեր կարգացրէ և Պոլսուրիոյ նոր նախարարութեան անգամ լինելու, և կը կարծուի թէ Արեւելեան Բումբէլի այս պաշտօնատարք Սնդր-Պալքանեան երկրին մէջ իրենց առաջնորդեալ բարձր պաշտօնը պիտի ընդունին:

Մօնիթէօր քաղցիրն «Հոկտեմբեր» ամսուան օրոշում մը՝ վերնագրով գրած մէկ հատուածին մէջ կը ծանուցանէ թէ՝ մեռելները քաղաքէն դուրս թաղելու համար ասկէ առաջ տրուած օրոշման հակառակ՝ Գասըմ փաշայի թուրք բնակիչ թոյլտուութիւն եղեր է՝ իրենց մեռելները նուրէն Տոյմալ տէրէի գերեզմանատան մէջ թաղել, որ բազմամարդ թաղերու մէջ տեղը կը գտնուի և զոր առողջական խորհուրդն երկու երեք տարի առաջ փակած էր առողջական պատճառներով:

Ռուսիոյ նաւային սպայ մը չորեքշաբթի օրը Գաղղիական թղթատար շոգենաւը նստաւ, բայց Այսթէֆանոս առջև համեմուն, ատրճանակի հարուածով մ'ինքզինք սպաննեց: Շոգենաւն ետ գտնուելով, դժբաղդ սպային մարմինը ցամաք հանեց և Ռուսիոյ հիւպատոսարանին յանձնուեցաւ:

Ռոտտօթօյն Մօնիթէօրի դրուած նամակ մը կը ծանուցանէ թէ քաղաքին սպանդանոցէն քսան քայլ հեռին սակերաց միջերանցի մը մէջ պահպանութիւն ընող կարնեցի Յակոբ առնուն Հայաղդի մը նոյն 12/24ին գիշերը սպաննուել է: Բանի մը նշաններէ հասկցուել է թէ ոճրագործը գրամ փնտուել են, և Յակոբ աղբուսպէս պաշտպաններ է ինքզինք: Այս ոճրագործութիւնը մեծապէս յուզեր է Ռոտտօթօյն հասարակութիւնը: Տեղական իշխանութիւնք բոլորովին անհոգ կը գտնուին եղեր չարագործները պատժելու:

Գար-Բերդէն Մօնիթէօր տիւ Բօմէրս քաղցիրն դրուած նամակներ զարմանալի լուրեր կուտան տեղւոյն բարենորոգմանց դործին վրայ: Միլիդեա մէկ կողմէ կը վախճուէր թէ Ապէտին փաշային Հալէպ զըրկած Բիւրտ չարագործներուն ի մօտոյ արտօնութիւն պիտի տրուի իւրենց տեղերը վերադառնալու: Միւս կողմէն Գար-Բերդի կառավարչին առաջին Բումբէլին դաւառելու համար ձերբակալելու տուած չարագործաց ամենն ալ յանկարծ բռնաէն արձակել տուել է, երբ արդէն անոնց մէկ մասը գաւառներով ոճրագործ ճանչուած էին: Կառավարիչը՝ քննիչ յանձնախումբը ցրուել է և Ապէտին փաշային Սերաստիա երթալէն յետոյ ոստիկանութեան գլխին հրաման ըրեր է որ Մանաս Էֆէնտին չճանչէ և անոր հրամանով մարդ չձերբակալէ: Միւսոյն կառավարիչն զՄանաս Էֆէնտին տրտաւքսեր է կառավարութեան պալատին, ուր կը բնակէր իբրեւ կառավարան, և այժմ Մանաս Էֆէնտին իւր ծախիւք տուն վարձած՝ հոն կը նստի և Կ. Պոլսէն հրահանգի կ'ստատէ եղեր: Կառավարչին Ապէտին փաշային կազմած նոր ոստիկանութիւնը ճանչել չէ ուզեր, և հեռաւարար նորակազմ ոստիկանութիւնըն ալ հեռագրեալ կը լուծուի եղեր: Մանաս Էֆէնտին երաւուն միտն զուրու ի բաց մը դտեր է տասնորդատրոց և ուրիշ տրոյց հաշիւներուն մէջ, բայց՝ կառավարիչը թող չէ տուել որ իւր գործը շարունակէ, չուղելով անշուշտ որ իւր գործութիւններն երեւան հանուին և իւր պաշտպանեալներն եղող պէյեր և ազաններ քնատուին: Վերջապէս Գար-Բերդի կողմէ ալ բարենորոգմանց դործը կատարեալ անշարժութիւն մ'եղած է, որուն Մօնիթէօրի թղթակիցը կատակերգութիւն անուն կուտայ, և առմէ մարդ գարմանք կը հարցնէ եղեր որ եթէ Գար-Բերդի կառավարիչը Կ. Պոլսէն դժ չունենայ, ինչպէս կրնայ այսպիսի բացարձակ ընդդիմութիւն մ'ընել բարենորոգմանց, և Բիւրդ պէյերն ու ազաններն այդչափ համարձակութեամբ պաշտպանել:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

Այս առաւօտ բացուեցաւ	44.45
Կէս օրին	44.44
Բումբէլի երկաթուղի	35.50
Թղթագրամ	94.0

ԸՆԹԱՅԻՆ ԱՐԽԵՐԴԱՅԻՆ

20 Երկրորդ

Արխիեպիսկոպոս Գրիգոր Կոնստանդնուպոլսեցի	3,21
Կ. Պատրիարք Գրիգոր Կոնստանդնուպոլսեցի	6 40
Քրիստոս Երեմիայի	5
Փոխ. 1863	69
• 1865	71
• 1869	69
• 1872	21
• 1873	63
Երանայ	Օտար 4

ԸՆԹԱՅԻՆ ԳԻՄԱՄԱՅԻՆ

24 Երկրորդ

Արխիեպիսկոպոս Գրիգոր Կոնստանդնուպոլսեցի	109 25
Քրիստոս Երեմիայի	87 25
Փոխ. 1863	90 05
• 1865	51 40
• 1869	6 20
• 1872	18
• 1873	17 30
Գրիգոր Կոնստանդնուպոլսեցի	360

Ա. Գ. Ա. ՅԻՆ

Ուստի այս օրերն անձին զէմ է գործ գործած գաւառականութեան փորձին ի դերին երկրաւոր տնտեսական Պատրիարքին երէկ Ռուսիոյ դեսպանատունն երթալով իւր խնդակցութիւնը յայտնեց :

Վանքից խորհուրդին իւր երէկեան նստին մէջ Մարտիանոս Երեմիայի վարդապետաց միջև ծագած խորհուրդը զրաւելով վերադառնալով յայտնեցաւ զորոշանքն իւր անձին իւր անձին զերկար իւր խնդակցութիւնը Պատրիարքին չոր ներկայեց :

Երկրորդ օրը նամակներէ գոհութեամբ իւր տեղեկանամբ թէ թրոթթը հազարապետն երկրաւոր հասած ժամանակ տեղեկացեալ ազգայիններէն արտաքին կարգի պատուով ընդունուեր է :

Գեր. Համբարձում վարդապետ ի դիմաց Հայ հասարակութեան երկու անգամ մին առաջնորդարանը և միւսը վանքը, փառաւոր ծառ տուեր է Ն. Վսեմութեան, որ Հայոց ազգին համար բաժակ առաջարկեր և ազգային զարգացման վրայ իւր գոհունակութիւնն յայտնեց է :

Իր փութամբ ծանուցանել թէ Պ. Երուսաղէմի քանդակած հրաշակերտ արձաններն՝ որք Սպարտակոսեանց գործարանը կը գործնուին, հեղինակին քաջալերական ձեռնառնութիւնն մընելու համար ուրոշուած է վիճակահանութեան դնել իւրաքանչիւր թիւը կէս օսկի լինելու պայմանաւ :

Եւսոյ թիւերը բնականաբար չորս պիտի լինին :

Վիճակահանութեան գործողութիւնն Սպարտակոսեանց գործարանին մէջ պիտի կատարի :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻ ԻՆՔ ՄԱՍԻՍԻԱՆԻՍԻԱՆ

Երկրորդ 29 օրեայ 1879

... Խմբագրատեղ տեղ :

Գերանէն կորուսած երկու Հայ ազգային տակաւին չեն գտնուած : Քաղաքին 3 ժամ հեռավորութիւնն ունեցող ձիւնն անուն զիւրէն քանի մը տաճկաց վրայ կապած ըլլալով ձերբակալուեցան : Ուստի 12 անձ են, որոցմէ մին կ'ըսէ թէ՝ « Ձիւն արձակեցէք որ գտնուի » : այս վերջինին Հայոցն և երբայրը բանտարկուելով :

զինքը աղաւ կը թողուն որ երթայ գտնուի : Բանտարկուեալներուն հարցաւ քննութեան կը հասկցուի, որ ազգայիններն յիշեալ ձիւնն զիւրէն պահուած են : Կըսուի թէ՝ ազգայիններէն մին բուսական ընդդիմութիւնն ցոյց տուած ըլլալով զիւրէն կը վերադառնա, կը յաւանդուի մի քանի օրէն կը գտնուին : Գեր. Գրիգորեան թէ այս և թէ ասոր նման խնդիրներուն համար խիստ ազգային կերպով իւր իշխանութիւնը ի գործ կը դնէ կառավարութեան գործը :

Վերջինիս ձիւնն զիւրէն քաղաքի մէջ ցրուելու համար Կոնստանդնուպոլսէն Հայոց գիւղացիք ալ Հայոց գարձած են : տակաւին երկնց մէջ երկնցին օղի, թաթ օղի և այս տեսակ մասկանուն ունեցողներ շատ կան, շատ քան որքան զիւրէն քաղաքը բնակուած խօսքին նման այս թիւքայող ձիւնն ցրուելու ալ խիստ մտաւորաբար և բարբարոս մարդիկ են :

Քաղաքին 6 ժամ հեռավորութիւնն ունեցող թրոթթի դիւրն, որուն բնակիչքը Գիւրը են, մէկ Հայ ընտանիք մը կայ : այս ընտանիքը չափահաս օրիորդ մը ունենալով, ուրիշ գիւղացի Հայեր քանիցս կերթան կուգին, սորա հայրը և մայրը չեն տար : 50 լիւր փութարէն կը պահանջեն որ տան, չափազանց զեղեցիկ ըլլալուն համար : Զարմանալին սա է որ, նոյն գիւղացի Գրեքը ալ կը յայտարարեն թէ, մեք այն ազգային պիտի փախցնենք : Ազգային ծնողքը բնաւ կարեւորութիւն չտար այս խօսքերուն : ոչ Գրեքէն կը վախայ և ոչ ալ Հայոց կուտայ : Վտանքը հեռաւորացի անձինք, կուգան Գեր. Սպարտակոսեան և Զոր իրենց գիւրը կը յայտնեն : Գեր. Գրիգորեան խօսքին պաշտօնական կերպով մարդ կը զրկէ յիշեալ գիւրն և մեծ գոհարութիւններով ազգային հասերել կուտայ : ահա այս կերպով ազգային փախցնելու սպառնացող Գիւրերն յաւաստ կը մնան :

Միւս գիւրն մէկ Ս. Երեմիայի զանգակը առաւօտ երեկոյ կը հնչէ ի փառս Լուսաւորական Հայոց շէնորհի Գրիգորեանին : Միւս գիւրն այն տաճկները որ արեւելք կը ըլլային զանգակ դարձուելու, իրենց պատիւը կը կրեցին և տակաւին պիտի կրեն :

Տարածապետութիւն մը կայ պաշտօնական անձանց մէջ, որ իւր թէ կայսերական կը բանակի իրեղանքը Գրեքերը պիտի ըլլայ : ինչպէս յայտնի է մինչև ցարդ կը գործնուի հոս էր : կըսուի թէ, Գրեքերը զորաւորներն նորոգուելու համար հրաման կ'ըսէ թէ Պոլսէն ելլէ այս լուրը ստացէ, և կառավարութեան համար մեծ ծախսերու գումար բացուած են :

Ազգային վիճակին խիստ գոհացուցիչ է : Գեր. Գրիգորեանին վիճակը հասած օրէն ի վեր, որ և է ներպատակներու համար ժողովրդեան յօժար կամքը նուիրած գումարն կը լար հաշուով 2000 լիւրայն կը հասնի : Այս, իրեղանքն ու զարգեալ իւր խոր քունէն բաց լաւ շրջահայեցութեամբ սկսաւ գործել :

1879 տարւոյն մէջ Երեմիային ունեցաւ առաջնորդարան մը, գիւղերով ի վարժարան մը, Ազգ. փառաւոր գերեզմանատուն մը, երկուսն վարժարան մը ի Ս. Փրկչէ թաղ, Բնակարան վարժարան մը խիստ բարեկարգ, թատրոն մը նորաշէն, և և : 1879 թուականը Երեմիայի փառքն է :

Ուսումնասիրող ընկերութիւնը կը ջանայ մի քանի միջոցներով ծա-

ռայել Ազգին : Կիրականօրեայ վարժարան մը բացած է որ կը գործադարձուի չափահասներու : Նոյնպէս քիչ օրէն պիտի ունենայ նաև Լուսաւոր մը : Ուսումնասիրող ընկերութիւնը կը ջանայ մինչև մէկ ամիս թատրոնի շինութիւնը աւարտել, որպէս զի սկսի Ազգ. ներկայացումներ տալ :

Կը գտնուի և կը քաջալերուի Ուսումնասիրող ընկերութեան ազնիւ անդամներն, որք անդուլ ջանքեր կը դրո՞նեն վսեմ նպատակներով : Միայն թող ներուի մեզ զգուշութեան հրաւիրել զերեւել, այն գաւառէն, որ իրենց դէմ ի գործ դրուել կը խորհուի խորամանկներու կողմէն :

Ազգային գիւղերով վարժարանն իր վրայ կը հրաւիրեմ Ուսումն. խորհրդոյ ուղարկութիւնը : Վարժարանին Հոգաբարձութիւնը մինչև ցարդ ըստ իւր կարեւոր գործիքն ունեցած գոհացուցիչ վիճակն չենք սկսելք ելլէ ըսեմք թէ, Նազ. Օր. Մանիկ Պատմաբանին և Հոգաբարձութեան լանկը շնորհիւ էր : մասնաւոր Նազ. Օր. Մանիկին, որ չափաւոր աշխատութեանց ենթակայ է : Ինչ ընէ Հոգաբարձութիւնը, իւր հասցիով աղբիւրները կը ցամքին, ծնողք ամառվաճարները կը յաւաքեն :

Կաղաչեմք Գեր. Գրիգորեանին և Ուսումն. խորհրդոյ Մեծ. Անդամաց որ հաճին այն վարժարանին ալ գարման մը տալ, որպէս զի վարժարանին ներկայ վիճակն չխանգարի :

Ներկայիս կը փութամ հրապարակաւ շնորհակալութիւնս մատուցանել Երեմիայի տաղձարձոր՝ արհեստաւորաց, որք անձնակազմաբար կաշխատին զիւրթովի վարժարանի շինութեան : Մասնաւորապէս ճարտարապետ Գրիգոր Ղազանճեան և Տրդատ Տ. Ստեփանն աղայից, որք միշտ իրենց ներկայութեամբ կը հրահեին աշխատողաց վրայ : Արհեստաւորք կիւրակէ և տօն օրեր գլխաւորապէս աշխատեցան : Իսկ միւս օրերն իրենց քաղկէն օրականները վճարելու պայմանաւ, երկու գործաւոր կաշխատեցին : Եւսոյ մինչև ցարդ լրացած ըլլալով, վարժարանին բացման հանգիստը յետաճեցաւ : Սոյն յօդուած վերջացնելու կը պարտաւորուէի, յանկարծ հետեւեալ լուրն առի, որ այսօր պատահեց :

Երթարիճ գիւղէն քաղաքն իսողող բերող երիտասարդ ազգային մը, որ ընկերացած է եղբի իւր Գիւղացի մի քանի Տաճիկ երիտասարդներու հետ, ի մէջ ճանաչարհի կը գտնուի հրապարակ իւր քովն ընկերէն : Զարնող Տաճիկը, առանց պատճառի զարկած է : Եւսոյ վաղեմէ կըսէ Հայուն : Հայն ալ կը խնդայ, կը կրկնէ Տաճիկը ըսելով թէ Եւսոյ չարքա : և յանկարծ հրապարակ կը զղէ երիտասարդին և կը զարնէ : Զարնուող երիտասարդին հայրն ալ, որ բաւական հեռուէն կուգայ եղբի, կը հասնի կը տեսնէ որ իւր տղան շնչառաւ գետին բռնած է : Եղբու թիւնը հազիւ կրնայ յայտնել խեղճն իւր հօր : ծերունի հայրն յիշեալին գիւղի ելու վրայ գնելով կը բերէ քաղաք : Լսելով Սպարտակոսեան տարած են զարնուող Հայն, որ գեռ կենդանի է եղբի : Մարդասպանը փախեր է թէ, բայց ընկերներն հոս կը պարտին այս ժամանակ :

Տեսնենք ինչ վիճակն կունենայ այս խնդիրը : Այսպիսի վայրենի ժո-

ղովորդ մը թղթի վրայ եղած գտնաւորութիւններով պիտի բարեկարգուի : Սպարտակոսեան



Պատրիարք

1879 թ. 28

Պատրիարքութեան վարժ. Բ. Հիւսար

... Տէր :

Պատմական լրագրող մէջ հրատարակեալ ծանուցման համաձայն Գեր. Մ. Վրդ. Օրմանեան ճառարանէն անցեալ շաբաթ գիւղեր իւր կիւտարու կը թափարաց ընկերութեան լրարանին մէջ իրեն նիւթ ունենալով « Միութիւն Հայութեան »

Այսպիսի կարեւոր և հետաքրքրական խնդրոյ մը վրայ խմատուն անձի մը խորհուրդները ըսելու բաւերազուրկ են զրկուած էի աւանդ. բայց բարեկամներէն մին, որ իր կերթ մասք և ազգասէր սրտով կարող է ըստ արժանւոյն գնահատել այսպիսի ճառ մը, ունեցողիւնէն մին ըլլալու պատեհութիւնը ունենալով մեծ գովեստութիւնը յաւանդեալ անոր վրայ : և պատմեց թէ ինչպէս խառն բաղմունքի մը համակրանք և զմայլմամբ մտիկ ըրած էր գնա երկու ժամու մաս :

Տարակոյս չունիմ որ շատեր պիտի ճանաչեցին ինձ հետ խնդրել Գեր. ճառարանէն որ բարեհաճի հրատարակել իւր ճառը լրագրոյ մը միջոցաւ, որով ամբողջ հասարակութիւնը կարող ըլլայ օգտիւ անի :

Կը հաւատամ թէ լրարանը մեծ ծառայութիւններ պիտի մատուցանեն մեր ազգին երբ օր ըստ օրէ աւելի բաղմունք և աւելի զարգանան : կը փափաքեմ այս առթիւ իմ խնդակցութիւնս յայտնել իսկիւն տարու երիտասարդութեան իրենց այս մասին ըրած ջանից և վայելած յաջողութեան համար :

Խնդրելով որ բարեհաճիք հիւրանկարել սոյն երկաթուղի Զեր թիւթերէն միայն մէջ, մնամ :

Վ. Զ. Ս. Ս.

ՆԱԽՆԻՑՈՒՄ

Ս. Երուսաղէմայ վարդապետն իւր կիւտար վանքին այգին Գաղղիստան ճառատէսի 11 թիւ միայն մեծ տունը որ 330 կանգուն տեղ է : Վարդապետն ծախու է, ուստի ս'ի որ կուգէ մինչև յաւաքիկայ հինգշաբթի օր պէտք է յետաւորեալ տունը գալ :

22 նոյ 1879

1-3

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՔ
ԳԱՂՂԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ՏԱՐԵԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՊԱՐԱԿԱՆ
ՃԱՌ

ՊԱՐՈՆ ԺԻՒԼ ՍԻՄՈՆԻ
Տնօրէնի Աղաւթիկային
Թարգմանեաց

Երանայ Ս. Աւանան
Կը գտնուի ամեն Հայ գրաւոր ճառաց քով և Պատճէ-գարու Սուրբ Պօղոս աղային խանութը :

Դին 100 փարայ

ԵՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՐԱՐՔ ԳԱՂՂԱՅԻՆ ՀԱՐԲԱՅ
Գրեց Եսայի Վ. Ղեկնդրան Ապահանեաց միւսին Ս. Կարապետի Ուստին Տարօնոյ

Կը գտնուի ամեն Հայ գրաւոր ճառաց քով և Պատճէ-գարու Սուրբ Պօղոս աղային խանութը :

Դին 100 փարայ

